ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «18» մայիսի 2012 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 13 Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 24-Ա/Ք ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման Հավելված N 1-ի 12-րդ կետի 4-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ Ե Մ

1. Հաստատել գիտական միջոցառումների (գիտաժողովների, գիտական կոնֆերանսների, սիմպոզիումների, սեմինարների) կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն Հավելված N 1-ի.

2. Հաստատել գիտական միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման հայտի ձևը՝ համաձայն Հավելված N 1.1-ի, գիտական միջոցառման հայտի գնահատման սանդղակը՝ համաձայն Հավելված N 1.2-ի, գիտական միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման հանձնարարության պայմանագրի ձևը՝ համաձայն Հավելված N 1.3-ի, գիտական միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական աջակցությամբ կայացած գիտական միջոցառման հաշվետվության ձևը՝ համաձայն Հավելված N 1.4-ի.

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի օգոստոսի 23-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտաժողովի կազմակերպման ֆինանսական աջակցության տրամադրման կարգը, գիտաժողովի կազմակերպման ֆինանսական

աջակցության տրամադրման հայտի և ՀՀ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ անցկացված գիտաժողովի հաշվետվության ձևերը հաստատելու մասին» N 24-Ա/Ք հրամանը.

4. Հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Գ. Մելիքսեթյանին՝ սույն հրամանը և հավելվածները տեղադրել Կոմիտեի էլեկտրոնային պաշտոնական կայքում.

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Վ. Գսպոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
18.05.2012 թ. N13 -Ա/Ք հրամանի

ԿԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններում կամ բուհերում (այսուհետև՝ Կազմակերպություններ) գիտական միջոցառումների (գիտաժողովների, գիտական կոնֆերանսների, սիմպոզիումների կամ սեմինարների) կազմակերպման համար ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի (այսուհետև՝ Կոմիտե) կողմից ֆինանսական աջակցության տրամադրման կարգը:

1. Կազմակերպությունները մինչև ընթացիկ տարվա մարտի 1-ը Կոմիտե են ներկայացնում հաջորդ տարվա ընթացքում նախատեսվող գիտական միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական աջակցություն ստանալու վերաբերյալ հայտեր՝ համաձայն սույն կարգին կից Հավելված 1.1-ի.

2. Կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի ընդունումից հետո Կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է ներկայացված հայտերի տեխնիկական ստուգում, անհրաժեշտության դեպքում դրանք վերադարձնելով լրամշակման, կազմում ներկայացված հայտերի ցանկ և այն տրամադրում Կոմիտեի նախագահին:

3. Ներկայացված հայտերի գնահատման նպատակով Կոմիտեի նախագահի հրամանով իր նախագահությամբ ստեղծվում է հանձնաժողով՝ կազմված գիտական և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվող պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից, որը հայտերի գնահատման գործընթացը իրականացնում է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Կոմիտեի նախագահի հրամանով հաստատվում է նաև հանձնաժողովի կազմը և աշխատակարգը:

4. Հանձնաժողովը հայտերը գնահատում է գնահատման չափանիշների սանդղակով՝ համաձայն սույն կարգին կից Հավելված 1.2-ի:

5. Հանձնաժողովի կողմից գնահատման արդյունքների հիման վրա Վարչության կողմից ձևավորվում է գնահատականների նվազման կարգով հայտերի ցանկ և ներկայացվում Կոմիտեի նախագահի հաստատմանը:

6. Կոմիտեի նախագահը, ելնելով տվյալ տարվան հաջորդող տարվա ՀՀ պետական բյուջեի նախագծով գիտական միջոցառումների համար նախատեսվող հատկացումների չափից, հաստատում է այն գիտական միջոցառումների նախնական ցանկը, որոնց ծախսերի նախահաշիվները ներառվում են Կոմիտեի կողմից ներկայացվող հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտում:

7. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաստատումից հետո Կոմիտեն 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում իր ինտերնետային կայքում

հրապարակում է ֆինանսական աջակցության երաշխավորված գիտական միջոցառումների ցանկը:

8. Ֆինանսավորման երաշխավորված գիտական միջոցառումների աշխատանքները սկսելու օրվանից առնվազն 40 (քառասուն) աշխատանքային օր առաջ Կազմակերպությունը Կոմիտե է ներկայացնում գիտական միջոցառումների հայտի նախահաշվի և նախահաշվի հիմնավորման, անցկացման ժամկետների և վայրի վերաբերյալ ճշգրտված տեղեկատվություն:

9. Գիտական միջոցառման կազմակերպումը սկսելու օրվանից առնվազն 30 (երեսուն) աշխատանքային օր առաջ Կոմիտեի և Կազմակերպության միջև կնքվում է հանձնարարության պայմանագիր՝ համաձայն սույն կարգին կից Հավելված 1.3-ի:

10. Կոմիտեն, տրամադրվող ֆինանսական միջոցները գիտական միջոցառումը սկսելու օրվանից առնվազն 20 (քսան) աշխատանքային օր առաջ փոխանցում է Կազմակերպության հաշվեհամարին:

11. Գիտական միջոցառման ավարտից հետո Կազմակերպության ղեկավարը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտե է ներկայացնում հաշվետվություն՝ համաձայն սույն կարգին կից Հավելված 1.4-ի՝ կից ներկայացնելով Կոմիտեի միջոցով տրամադրված ֆինանսական միջոցներով ձեռք բերված ապրանքների և ծառայությունների ծախսերը հավաստող փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագրեր, հաշվիչ դրամարկղային կտրոններ, տեղեկանքներ և այլն) պատճենները:

12. Վարչությունը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է ներկայացված հաշվետվությունների տեխնիկական ստուգումը և դրանք տրամադրում Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին՝ ֆինանսական միջոցների ծախսման համապատասխանությունը ստուգելու և հաշվետվությունն ընդունելու համար:

13. Գիտական միջոցառման անցկացման ժամկետների փոփոխության դեպքերում Կազմակերպությունը դիմում է Կոմիտե համապատասխան թույլտվություն ստանալու նպատակով:

14. Գիտական միջոցառումը չանցկացնելու կամ Կոմիտեի միջոցով տրամադրված գումարը լրիվ չծախսելու դեպքում Կազմակերպությունը այն փոխանցում է Կոմիտեի գանձապետական հաշվեհամարին՝ այդ մասին տեղեկացնելով Կոմիտե:

Հավելված 1.1
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
18.05.2012 թ. N13 -Ա/Ք հրամանի

ՀԱՅՏ
ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Գիտական միջոցառման անվանումը _____
2. Գիտական միջոցառման բնագավառը _____
3. Կազմակերպության

լրիվ և կրճատ անվանումը _____

հասցե _____

հեռախոս _____

ֆաքս _____

էլ-փոստ _____

4. Կազմակերպության ղեկավար Ա.Ա.Հ. (լրիվ)_____
5. Գիտական միջոցառման կազմկոմիտեի նախագահ Ա.Ա.Հ. (լրիվ)_____
6. Անցկացման վայրը, ժամկետները_____
7. Մասնակիցների ընդհանուր թիվը ____
8. Օտարերկրյա պետություններից մասնակիցների թիվը _____
9. ԱՊՀ երկրներից մասնակիցների թիվը _____
10. ՀՀ-ից երիտասարդ մասնակիցների թիվը (մինչև 35 տ.) _____
11. Գիտական միջոցառման անցկացման ֆինանսական ընդհանուր ծավալը _____
12. ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ից հայցվող ֆինանսական աջակցության չափը _____

Կազմակերպության ղեկավարի ստորագրություն _____

ամսաթիվ _____

Կ. Տ.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

* Ներկայացնել գիտական միջոցառման նպատակները, գիտական հիմնավորումը և կարևորությունը, ակնկալվող արդյունքները, կազմակերպիչների վերջին 3 տարում ձեռքբերումները (գիտական հրապարակումները, պաշտպանված ատենախոսությունները, գիտության նույն բնագավառում համանման գիտական միջոցառումների կազմակերպումը), ՀՀ-ում գիտական միջոցառման բնագավառի համապատասխան մասնագետների կամ գիտական դպրոցի առկայությունը, միջազգային համագործակցությանը նպաստելու աստիճանը և այլն (մինչև 2 էջ):

ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ (ԿՈՄԻՏԵՆԵՐԻ) ԿԱԶՄԸ

հ/հ	անուն ազգանուն	քաղաք, երկիր
1.		
2.		
3.		
4.		
5.		
6.		

ՆԱԽԱՀԱՇԻՎ

հ/հ	ծախսերի անվանում	միավոր	միավորի արժեք	քանակ	ընդամենը (հազար դրամ)
1.	Հրավիրված մասնակիցների գործուղման ծախսեր				
	ա) ճանապարհածախս				
	բ) գիշերավարձ	մարդ x օր			
	գ) օրապահիկ	մարդ x օր			
2.	Տրանսպորտային ծախսեր (դիմավորում, ճանապարհում, էքսկուրսիաներ և այլն)				
3.	Դահլիճների և տեխնիկայի վարձակալում	հատ x օր			
4.	Ինտերնետային ծառայությունների հետ կապված ծախսեր				
	ա) կայքի ստեղծում	հատ			
	բ) կապի ապահովում				
5.	Տեղեկատվական նյութերի հրապարակում	հատ			
6.	Պաստառների տպագրում	հատ			
7.	Զեկույցների սեղմագրերի հրատարակում	հատ			
8.	Զեկույցների հրատարակում	հատ			
9.	Գրենական պիտույքներ				
	ա) պայուսակ	հատ			
	բ) բլոկնոտ	հատ			
	գ) գրիչ	հատ			
	դ) «բաջ»	հատ			
10.	Տնտեսական ծախսեր (ապրանքներ)				
11.	Կազմտեխնիկա				
	ա) համակարգիչ	հատ			
	բ) տպիչ	հատ			
	գ) սկաներ	հատ			
	դ) պրոյեկտոր	հատ			
12.	Ներկայացուցչական ծախսեր				
	ա) ընդունելություն	մարդ			
	բ) բանկետ	մարդ			
	գ) հանդիսավոր միջոցառումներ	մարդ			
	դ) փակման արարողություն	մարդ			
13.	Սուրճի ընդմիջումների ծախսեր	մարդ x օր			
14.	Մշակութային միջոցառումներ				
15.	Չնախատեսված ծախսեր				
16.	Կազմակերպման և անցկացման աշխատանքների մեջ ներգրավվածների վարձատրություն				
17.	Ընդամենը				

Լրացման ամսաթիվ՝

Կազմկոմիտեի նախագահ

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

Կազմակերպության ղեկավար

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

Կ.Տ.

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

միջոցների անվանում	միավոր	միավորի արժեք	քանակ	ընդամենը (հազար դրամ)
Մասնակցության անդամավճար				
ա) մասնակիցներ օտարերկրյա պետություններից	մարդ			
բ) մասնակիցներ ԱՊՀ երկրներից	մարդ			
գ) մասնակիցներ ՀՀ-ից	մարդ			
Օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպություններից հատկացվելիք				
Օտարերկրյա հովանավորների կողմից հատկացվելիք				
ՀՀ կազմակերպություններից կողմից հատկացվելիք				
ՀՀ-ում գործող ֆոնդերի կողմից հատկացվելիք				
Այլ հովանավորների կողմից հատկացվելիք				
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից հատկացվելիք				

Կազմկոմիտեի նախագահ _____ _____

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

Հավելված 1.2
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
18.05.2012 թ. N13 -Ա/Ք հրամանի

ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Գիտական միջոցառման անվանումը՝ _____

h/h	Չափորոշիչներ	Գնահատական	
		հնարավոր	վերջնական
1.	**Գիտական կարևորությունը**		
1.1.	նյութերն ընդգրկվելու են գիտության վերլուծության տեղական շտեմարաններում	**2**	
1.2.	նյութերն ընդգրկվելու են գիտության վերլուծության ԱՊՀ շտեմարաններում	**3**	
1.3.	նյութերն ընդգրկվելու են գիտության վերլուծության միջազգային առաջատար շտեմարաններում	**5**	
2.	**Մասնակիցների կազմը**		
2.1.	50%-ից պակաս ԱՊՀ երկրներից են կամ՝ միայն ՀՀ-ից	**2**	
2.2.	50%-ից ավելին ԱՊՀ երկրներից են, իսկ տնտեսապես զարգացած երկրների (ԱՄՆ, եվրոպական երկրներ և այլն) ներկայացուցիչները սակավաթիվ են	**3**	
2.3.	50%-ից ավելին ներկայացնում են տնտեսապես զարգացած երկրներ (ԱՄՆ, եվրոպական երկրներ և այլն)	**5**	
3.	**Համապատասխան դպրոցի առկայությունը ՀՀ-ում**		
3.1.	ուղղությունն ունի միայն տեղական նշանակություն կամ ՀՀ-ում նոր է ձևավորվում	**2**	
3.2.	ՀՀ-ում այդ ուղղության ներկայացուցիչներն ունեն միջազգային առաջատար մասնագետների շարքերում ընդգրկվելու մեծ հավանականություն	**3**	
3.3.	ՀՀ-ում այդ ուղղության ներկայացուցիչները միջազգային առաջատար մասնագետների շարքերում են	**5**	
4.	**Միջազգային համագործակցությանը նպաստելու աստիճանը**		
4.1.	նախատեսվում է միայն տեղական կամ ռեգիոնալ համագործակցություն	**2**	
4.2.	նպաստում է միջազգային համագործակցություն հիմնելուն	**3**	
4.3.	զարգացնում է գոյություն ունեցող միջազգային բարձրակարգ համագործակցությունը	**5**	
5.	**ՀՀ-ից երիտասարդ մասնագետների (մինչև 35 տարեկան) մասնակցության աստիճանը**		
5.1.	փոքր է ընդհանուրի 10%-ից	**2**	
5.2.	կազմում է ընդհանուրի 10-ից 20%-ը	**3**	
5.3.	կազմում է ընդհանուրի 20%-ից ավելին	**5**	
	Ընդհանուր գնահատականը		

Հավելված 1.3
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
18.05.2012 թ. N13 -Ա/Ք հրամանի

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

«ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ «ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ,ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ, ՍԻՄՊՈԶԻՈՒՄՆԵՐԻ, ՍԵՄԻՆԱՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Ք. Երևան «____» _____ 20.. թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի (այսուհետ՝ Հանձնարարող), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____ -ը, (այսուհետ՝ Կազմակերպություն),
(կազմակերպության անվանումը)
ի դեմս Կազմակերպության/բուհի տնօրեն/ռեկտոր _____ -ի
(անուն ազգանուն)
(այսուհետ՝ Հանձնակատար), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 782-րդ հոդվածը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրով Հանձնարարողը սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող ֆինանսավորման երաշխավորված հայտի նախահաշվի հիման վրա ՀՀ պետական բյուջեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի «Գիտաժողովների, գիտական կոնֆերանսների, սիմպոզիումների, սեմինարների (այսուհետ՝ Գիտական միջոցառումներ) կազմակերպում» ծախսային ծրագրի ֆինանսական միջոցներից Հանձնակատարին է տրամադրում ֆինանսական միջոցներ_____
_____
(Գիտական միջոցառման անվանումը, անցկացման ժամկետները, վայրը)
Գիտական միջոցառման կազմակերպման համար:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

Սույն պայմանագրի գինն է (տրամադրվող ֆինանսական միջոցների չափը) _____ ՀՀ դրամ,
(թվերով ու տառերով)
որը տրամադրվում է Հանձնակատարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և ավարտվում պատշաճ կատարմամբ:

3.2 Հանձնարարողը սույն պայմանագրի 2-րդ կետով նախատեսված ֆինանսական միջոցները Հանձնակատարին է տրամադրում սույն պայմանագրի կնքման օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Սույն պայմանագիրը կարող է վաղաժամ լուծվել գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Սույն պայմանագրի Կողմերն ունեն Կոմիտեի նախագահի հրամանով հաստատված «Գիտական միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման» կարգով նախատեսված իրավունքներ և պարտականություններ:

4.2. Հանձնարարողն իրավունք ունի.

4.2.1. ցանկացած ժամանակ ստուգել Հանձնակատարի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտականությունների իրականացման ընթացքը:

4.3. Հանձնարարողը պարտավոր է.

4.3.1. սույն պայմանագրով սահմանված ժամկետում տրամադրել նախատեսված ֆինանսական միջոցները:

4.4. Հանձնակատարն իրավունք ունի.

4.4.1. ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Հանձնարարողին վերադարձնելով տրամադրված ֆինանսական միջոցները,

4.4.2. հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Հանձնակատարի կողմից սույն պայմանագրի 4.3.1. կետի խախտման դեպքում:

4.5. Հանձնակատարը պարտավոր է.

4.5.1. սույն պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարել անձամբ և սահմանված ժամկետում,

4.5.2. սույն պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարելիս առաջնորդվել ՀՀ օրենսդրությամբ՝ մասնավորապես «Գնումների մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքների պահանջներով,

4.5.3. Հանձնարարողի պահանջով նրան տրամադրել պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն,

4.5.4. Գիտական միջոցառման տեղեկատվական նյութերում, զեկույցների սեղմագրի և նյութերի ժողովածուի տիտղոսաթերթերում, ինչպես նաև Գիտական միջոցառման մասին պաստառում նշել, որ Գիտական միջոցառման կազմակերպման և անցկացման համար Կոմիտեն տրամադրել է ֆինանսական աջակցություն:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից

ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

6.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումները իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՂ	ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե ք. Երևան, Կառավարական տուն 3 1 ՏԳԲ 900011033033 Նախագահ՝ Ս. Հարությունյան	
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված 1.4
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
18.05.2012 թ. N13 -Ա/Ք հրամանի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

1. Գիտական միջոցառման անվանումը _____
2. Գիտական միջոցառման բնագավառը _____
3. Կազմակերպության

լրիվ և կրճատ անվանումը_____

հասցե _____

հեռախոս _____

ֆաքս _____

էլ-փոստ _____

4. Գիտական միջոցառման կազմկոմիտեի նախագահի Ա.Ա.Հ. (լրիվ) _____
5. Անցկացման վայրը, ժամկետները _____
6. Մասնակիցների փաստացի թիվը _____
7. Օտարերկրյա պետություններից մասնակիցների փաստացի թիվը _____
8. ԱՊՀ երկրներից մասնակիցների փաստացի թիվը _____
9. Երիտասարդ մասնակիցների փաստացի թիվը (մինչև 35 տարեկան) _____
10. ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ից ստացված փաստացի գումարի ծավալը _____
11. Գիտական միջոցառման կազմկոմիտեի նախագահի ստորագրություն _____

Կազմակերպության ղեկավարի ստորագրություն _____

ամսաթիվ _____

Կ. Տ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՍԻՆ

1. Ազգանուն, անուն, հայրանուն (լրիվ, հայերեն)
2. Ազգանուն, անուն, հայրանուն (լրիվ, անգլերեն)
3. Ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի)
4. Սեռը
5. Գիտական աստիճանը
6. Գիտական աստիճանի շնորհման տարեթիվը
7. Գիտական կոչումը
8. Գիտական կոչման շնորհման տարեթիվը
9. Աշխատանքի վայրը (լրիվ անվանումը)
10. Պաշտոնը
11. Գիտական հետաքրքրությունների բնագավառը և հուշող բառեր (15–ից ոչ ավելի)
12. Գիտական հրապակումների ընդհանուր թիվը (առանց զեկույցների, թեզիսների)
13. Փոստային հասցեն
14. Աշխատավայրի հեռախոսահամարը
15. Տան հեռախոսահամարը
16. Բջջային հեռախոսահամարը
17. Ֆաքս
18. Էլ. հասցեն
19. Ստորագրություն

ամսաթիվ

ԱՆՑԿԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

1. Գիտական միջոցառման կազմկոմիտեի կազմը
2. Գիտական միջոցառման գիտական ծրագիրը
3. Գիտական միջոցառման աշխատանքների ժողովածուի կամ զեկույցների թեզիսների մասին մատենագիտական տվյալներ (անվանումը, հրատարակման տարին, հրատարակչությունը և այլն)
4. Գիտական միջոցառման թեմատիկայի վերլուծական ակնարկ* (10 էջից ոչ ավելի)
5. Գիտական միջոցառման որոշումը (եթե այն ընդունվել է)
6. Գիտական միջոցառման կազմկոմիտեի նախագահի ստորագրություն _____

ամսաթիվ _____

_____

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հ/հ	ծախսերի անվանում	միավոր	միավորի արժեք	քանակ	ընդամենը (հազար դրամ)
1.	Հրավիրված մասնակիցների գործուղման ծախսեր				
	ա) ճանապարհածախս				
	բ) գիշերավարձ	մարդ x օր			
	գ) օրապահիկ	մարդ x օր			
2.	Տրասպորտային ծախսեր (դիմավորում, ճանապարհում, էքսկուրսիաներ և այլն)				
3.	Դահլիճների և տեխնիկայի վարձակալում	հատ x օր			
4.	Ինտերնետային ծառայությունների հետ կապված ծախսեր				
	ա) կայքի ստեղծում	հատ			
	բ) կապի ապահովում				
5.	Տեղեկատվական նյութերի հրապարակում	հատ			
6.	Պաստառների տպագրում	հատ			
7.	Զեկույցների սեղմագրի հրատարակում	հատ			
8.	Զեկույցների հրատարակում	հատ			
9.	Գրենական պիտույքներ				
	ա) պայուսակ	հատ			
	բ) բլոկնոտ	հատ			
	գ) գրիչ	հատ			
	դ) «բաջ»	հատ			
10.	Տնտեսական ծախսեր (ապրանքներ)				
11.	Կազմտեխնիկա				
	ա) համակարգիչ	հատ			
	բ) տպիչ	հատ			
	գ) սկաներ	հատ			
	դ) պրոյեկտոր	հատ			
12.	Ներկայացուցչական ծախսեր				
	ա) ընդունելություն	մարդ			
	բ) բանկետ	մարդ			
	գ) հանդիսավոր միջոցառումներ	մարդ			
	դ) փակման արարողություն	մարդ			
13.	Սուրճի ընդմիջումների ծախսեր	մարդ x օր			
14.	Մշակութային միջոցառումներ				
15.	Չնախատեսված ծախսեր				
16.	Կազմակերպման և անցկացման աշխատանքների մեջ ներգրավվածների վարձատրություն				
17.	Ընդամենը				
18.	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ կողմից հատկացված փաստացի գումարը				

Լրացման ամսաթիվ՝

Կազմկոմիտեի նախագահ _____ (ստորագրություն) _____ (Ա.Ա.Հ.)

Կազմակերպության ղեկավար _____ (ստորագրություն) _____ (Ա.Ա.Հ.)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ _____ (ստորագրություն) _____ (Ա.Ա.Հ.)

Կ.Տ.